Ուրբաթ, 26.03.2021

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Ինչու՞ էին միության պատգամավորները երկար տարիներ շարունակ պատրաստ Բաքվի ավտորիտար վարչակարգի կողմը պահել

Ռեյնհարդ Վեզեր

«Հաղթանակը մերն է». – 2020 թ. նոյեմբերին Բաքվում Հայաստանի նկատմամբ հաղթանակի վերաբերյալ քարոզչական պաստառ. լուսանկար՝ Picture Alliance

Կասկածելի՞ է, երբ Բունդեսթագի մի կուսակցության չորս պատգամավորներ միանգամայն նույնական գրավոր հարցեր են ուղղում դաշնային կառավարությանը և ոչ թե միասին, այլ՝ նրանցից ամեն մեկն առանձին: Բունդեսթագի՝ 2019 թ. սեպտեմբերի 27-ի 19/13638 տպագիր նյութերում Քրիստոնյա-դեմոկրատական միության (ՔԴՄ, գերմ.՝ Christlich-Demokratische Union) պատգամավորներ Աքսել Ֆիշերը, Էբերհարդ Գիենգերը, Օլավ Գութինգը և Նիկոլաս Լյոբելը դաշնային կառավարությունից տեղեկություն են ուզում Լեռնային Ղարաբաղի շուրջ ադրբեջանա-հայկական հակամարտության նոր զարգացումների հանդեպ նրա դիրքորոշման մասին: Ինչու՞ այդ չորս տղամարդիկ չեն միավորել ջանքերը, ինչպես սովորաբար դա ընդունված է, երբ մի խմբավորման պատգամավորները ցանկանում են նույնն իմանալ միևնույն թեմայի վերաբերյալ: Եվ ի՞նչն է պատճառը, որ հարցերում սխալմամբ որպես նախագահ նշված՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նույնիսկ անունը նույն կերպով սխալ է գրված: Գուցե նրանք հանձնառե՞լ են որևէ մեկի հարցումները, հարցումներն արել են որևէ մեկի հանձնարարությա՞մբ:

Խորհրդարանականների ցանց

Դաշնային կառավարությանը պատգամավորների հարցերը ձևակերպված են այնպես, որ դրանք պարունակում են հստակ կողմնապահություն՝ հօգուտ Ադրբեջանի, ընդդեմ Հայաստանի: Եվ ամեն անգամ, երբ միության քաղաքական գործիչները հատուկ համակրանք են արտահայտում Ադրբեջանի հանդեպ, այժմվանից սկսած՝ առաջանում է այն վատ ենթադրությունը, թե հնարավոր է, որ ինչ-որ մեկը գործել է մի ավտորիտար տիրակալի հանձնարարությամբ՝ նյութական փոխհատուցման դիմաց:

Ամսվա կեսերին Թյուրինգիայի ՔԴՄ-պատգամավոր Մարկ Հաուպտմանը վայր դրեց մանդատը՝ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ ադրբեջանական ձեռնարկությունները նրա՝ “Südthüringen Kurier”-ում («Հարավթյուրինգյան սուրհանդակ») տեղադրել են գովազդներ, որոնք դժվար էր բացատրել նորմալ գովազդային գործունեությամբ: Մարտի սկզբից Մյունխենի գլխավոր դատախազությունը կաշառակերության կասկածանքով հետաքննություն է վարում 2019 թ. սեպտեմբերի չորս հարցատուներից մեկի՝ Կարլսրուեի ՔԴՄ-պատգամավոր Ակսել Ֆիշերի դեմ: Իսկ դեռ մեկ տարի առաջ Ֆրանկֆուրտի դատախազությունը, նույն կասկածանքի հիմամբ, հետաքննություն էր սկսել ՔԴՄ-պատգամավոր Կարին Շթրենցի դեմ, որը մահացել է անցյալ կիրակի, 53 տարեկան հասակում:

Երկուսն էլ մեղադրվում են, որովհետև, որպես Եվրոպական միության (ԵՄ) մի քանի պետությունների խորհրդարանականների մի ամբողջ ցանցի մաս, Ադրբեջանի վճարումների դիմաց որպես փոխհատուցում տարիներ շարունակ նպաստում էին այն բանին, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) սիստեմատիկ կերպով պաշտոններն այնպես էին զբաղեցվում, իսկ քվեարկություններն էլ այնպիսի ներգործության էին ենթարկվում, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում մարդու իրավունքների խախտումների և ընտրակեղծիքների քննադատությունը բանաձևերում «շրջափակվում» էր կամ, առնվազն, թուլացվում: Ու նաև նա, ում միջոցով գումարը պետք է հոսեր նրանց մոտ, միության անդամ է՝ Բունդեսթագի Քրիստոնեական-սոցիալական միության (ՔՍՄ, գերմ.՝Christlich-Soziale Union) նախկին պատգամավոր և խորհրդարանական պետքարտուղար Էդուարդ Լինտները:

Էներգամատակարարման հարցը

Նա, ով գնում է Կասպից ծովի փոքրիկ, բայց նավթով և գազով հարուստ երկրի հետ գերմանացի քաղաքական գործիչների յուրատեսակ հարաբերությունների հետքերով, արագորեն ընկնում է մի գոտի, որտեղ տիրում է կասկածը, իսկ հստակ ուրվագծերը խառնվում են իրար: Արդյո՞ք անխոհեմությունը, միամտությունը և գիտելիքի պակասն էին, որ գերմանացի պատգամավորներին հանգեցրին արտահայտությունների, որոնք ամբողջովին ավտորիտար պետության քարոզչության ոգով են, թե՞ դրա տակ մեկ այլ բան է թաքնված: Արդյո՞ք պարտագրող փաստանշան է, երբ խորհրդարանի պետքարտուղարը գործում է մեկ ուրիշ երկրի լոբբիստների շրջանում, թե՞ երկկողմ տնտեսական կապերը կազմակերպելիս նա իր գործառույթում ընդունում է միայն նորմալ ներկայացուցչական առաջադրանքներ:

Ադրբեջանը ղեկավարվում է նախագահ Իլհամ Ալիևի «ծանր բռունցքով»: Ըստ “Human Rights Watch” իրավապաշտպան կազմակերպության՝ «նա գրեթե ջնջել է անկախ գործունեության, քննադատական լրագրության և ընդդիմադիր քաղաքական գործունեության տարածքը»: Ալիևն ու նրա ազգականները երկրին վերաբերվում են՝ որպես ֆեոդալական սեփականություն: Կոռուպցիան նրանց իշխանության անփոխարինելի հենարանն է: Այնուամենայնիվ, կապերն այդպիսի մի երկրի հետ ինքնին դատապարտելի չեն.

պատգամավորները նույնչափ, որչափ կառավարություններն ու դիվանագետները, կարող են խոսել ոչ միայն վարչակարգի ներկայացուցիչների հետ, որոնք իրենց համար համակրելի են:

Եվ լավ հիմքեր կան Ադրբեջանը դիտելու որպես ԵՄ-ի ռազմավարական կարևոր գործընկեր՝ իր էներգամատակարարումը դիվերսիֆիկացնելու ջանքերում, և դա ոչ միայն երկրի սեփական նավթի և գազի հանքավայրերի պատճառով: Եթե Եվրոպան ցանկանում է, շրջանցելով Ռուսաստանը, մուտք ստանալ դեպի Կենտրոնական Ասիայի հումքով հարուստ վայրեր, ապա միակ ճանապարհն անցնում է Կասպից ծովով՝ հասնելով Ադրբեջան, իսկ այնուհետև՝ Վրաստանով ու Թուրքիայով: Այդ պատճառով կանցլեր Անգելա Մերկելը և ԵՄ-ի էներգետիկայի հարցերով տարբեր հանձնակատարներ նախորդ տարիներին բազմիցս հանդիպել են նախագահ Ալիևի հետ:

Ակնածանք «Պետանվտանգության կոմիտե»-ի նախկին ղեկավարի հանդեպ

Այն, որ միության մի քանի քաղաքական գործիչներ, որոնք գործ են ունեցել Ադրբեջանի հետ, այժմ անորոշության մեջ են, այսուհանդերձ, քիչ կապ ունի այն բանի հետ, որ երկիրն անթերի ժողովրդավարություն չէ: Երկար ժամանակ գոյություն ուղեցող այն կասկածի ֆոնին, որ Ադրբեջանի լոբբիստական աշխատանքն ընթանում է կոռուպցիայի հետ համատեղ, որը և հաստատվել է ԵԽ-ում, հարցն ամենից առաջ վերաբերում է նրան, թե ՔԴՄ-ի քաղաքական գործիչներն ինչպես և որտեղ են արտահայտվել այդ մասին: «Այն, ինչը ես նորից և կրկին գրավիչ եմ համարում Ադրբեջանում, օրինակ, ժողովրդավարության երկարատև պատմությունն է»,- ասաց ՔԴՄ-ի պատգամավոր Օլավ Գուտինգը Գերմանիայում Ադրբեջանի լոբբիստական բազմաթիվ կազմակերպություններում ներառված ադրբեջանցի բլոգերի հետ զրույցում, որը հրապարակվել է 2020 թ. հունվարի 4-ին:

Դրան հակառակ՝ ՔԴՄ-ի պատգամավոր Նիկոլաս Լյոբելը, որը հրաժարական է տվել դիմակների բիզնեսի պատճառով, 2018 թ. կեսերին Ադրբեջան ուղևորությունից հետո իր կայքի մի զեկույցում պահանջեց երկրի մասին դատողություն անելիս նկատի առնել, որ այն «դեռ շատ երիտասարդ ժողովրդավարություն է՝ ուժեղ և թույլ կողմերով»: Նախագահ Իլհամ Ալիևի՝ 2003 թ. մահացած հոր և պետության առաջնորդի անմիջական նախորդի մասին Լյոբելը զեկուցեց. «Ուժեղ ղեկավարման միջոցով 1991 թ. նա ուղղություն տվեց երկրին և այն տարավ դեպի ազատություն, դեպի բաղձալի անկախություն»:

Դեռ իր կենդանության օրոք անձի պաշտամունքով «շրջապատված» Հեյդար Ալիևի մասին այս ձևակերպումը, գրեթե նույն ձևով կարելի է գտնել վարչակարգի քարոզչական գրքույկներում: Գործող նախագահի հայրը փաստացիորեն 1960-ական թթ. վերջին նախ որպես Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության «Պետանվտանգության կոմիտե»-ի ղեկավար՝պատասխանատու էր այլախոհների հետապնդման համար, իսկ այնուհետև, որպես կոմունիստական կուսակցության նախագահ, ոլորտը ղեկավարեց գրեթե քսան տարի՝ մինչ 1987 թ. պաշտոնանկ արվեց Միխայիլ Գորբաչովի բարեփոխումների քաղաքականությանը դիմակայելու պատճառով:

«Երիտասարդական միություն»-ից ի վեր միասին

Մարմնամարզության աշխարհի նախկին չեմպիոն Էբերհարդ Գիենգերը դրվատեց տարբեր առիթներով մայրաքաղաք Բաքվում միջազգային խոշոր մարզական միջոցառումների կազմակերպումը, որոնցով Ադրբեջանը ցանկանում է «փայլեցնել» իր միջազգային հեղինակությունը: Անցյալ տարվա մարտին, օրինակ, Գիգենգերը նույն բլոգերին, որին պատասխանել էր նաև իր խմբակից-գործընկեր Գութինգը, ասաց, որ դրա շնորհիվ երկիրը շարունակում է «բացվել»: Եթե մեկը ցանկանում է խոսել սպորտային իրադարձությունների միջոցով Ադրբեջանի «բացման» մասին, ապա դա արժե առավելագույնը մեկ նկատառումով. մինչ այդ դրանք գրեթե միակ հնարավորությունն են

օտարերկրյա լրագրողների համար՝ հասնելու, ընդհանրապես, այդ երկիրը, որը, ըստ իրավապաշտպան կազմակերպությունների, շարունակ դառնում է ավելի ու ավելի ռեպրեսիվ:

Ֆիշերը, Գիենգերը, Գութինգը, Լյոբելը, Հաուպտմանը, Շթրենցը և նաև Դաշնության էկոնոմիկայի նախարարության խորհրդարանական պետքարտուղար Թոմաս Բարեյշը ունեն Ադրբեջանի մասին բարեկամական արտահայտությունների՝ երկար տարիների փորձ, շփումներ ադրբեջանական լոբբիստական կազմակերպությունների հետ և մասնակցում են Ադրբեջանի դեսպանատան միջոցառումներին: Երկար ժամանակ «Միություն» խմբակցության որոշ հատվածներ հարաճուն անհանգստությամբ են հետևել այդ գործողություններին, որոնք, որոշ դեպքերում, ընթանում էին Բաքու մեկնելու ակներև շահագրգռության ուղեկցությամբ: Այդ անհանգստությունն ուժեղացավ որոշ ուղևորությունների հետ կապված հանգամանքների պատճառով. առանց հստակ ծրագրի դեպի Ադրբեջան ուղևորության առաջարկներ, հաղորդումներ Բաքվից, թե պատգամավորները չէին ցանկանում, որ պայմանավորված հանդիպումներին դեսպանությունն ուղեկցի իրենց, Կարին Շթրենցի պես պատգամավորների համար պայմանավորվածություններ Ադրբեջանի բարձրաստիճան քաղաքական գործիչների հետ, որոնք համատեղելի չէին Գերմանիայում իրենց կշռի հետ:

Կան ՔԴՄ-պատգամավորներ, որոնք ոչ միայն պատահականություն, այլ մի տեսակ օրինական են համարում այն, որ կուսակից ընկերները, ինչպիսիք են Նիկոլաս Լյոբելը և Մարկ Հաուպտմանը, որոնք աչքի էին ընկել դիմակի տհաճ գործից դեռ առաջ՝ լայնածավալ կողմնակի գործունեության պատճառով, որոշակի թուլություն էին հանդես բերում Ադրբեջանի հանդեպ: Դա տեղավորվում է նաև այն օրինակում, որ այդ երկուսը ՔԴՄ-պատգամավորների երիտասարդական խմբում փորձում էին համապատասխան տոնայնություն հաղորդել: Որովհետև «Երիտասարդական միության» երկարամյա նախագահ Ֆիլիպ Միսֆելդերը, որը մահացավ 2015 թ. և, որի պաշտոնավարման ընթացքում Հաուպտմանը և Լյոբելը «Երիտասարդական միություն»-ում բարձրացան ղեկավար դիրքի, աչքի էր ընկնում ոչ միայն կողմնակի եկամտաբեր գործունեությամբ, այլև Ադրբեջանի "The European Azerbaijan Society" (TEAS) լոբբիստական կազմակերպության հետ շփումներով:

Տեսանյութերն անհետացել են

ՔԴՄ-ի՝ Ադրբեջանի բարեկամների շրջանում մեկ այլ ակնառու իրողություն է նրանց ծագումը. նրանց մեծամասնությունը ծագումով Բադեն-Վյուրթեմբերգից է: Այնտեղ՝ երկրամասի մայրաքաղաք Շտուտգարտում, տեղի ՔԴՄ-ի գործիչների շրջանում նախկին մի հեղինակություն՝ կանցլեր Հելմուտ Կոլի կառավարության վերջին խոսնակը՝ Օտտո Հաուզերը, որպես պատվավոր հյուպատոս, ավելի քան տասը տարի գործում է հօգուտ Ադրբեջանի: Ըստ "Frankfurter Allgemeine Zeitung"-ի հաղորդագրությունների՝ Հաուզերը միշտ ուղեկցել է պատգամավորներին դեպի Բաքու ուղևորությունների ժամանակ և այնտեղ միջնորդավորել պայմանավորվածություններ: Եվ նա կանոնավոր կերպով պաշտպանել է Ադրբեջանի վարչակարգի դիրքորոշումը՝ անսովոր հստակությամբ: Այսպես, օրինակ, 2012 թ. "Stuttgarter Zeitung"-ին տված հարցազրույցում "Amnesty International"-ի կողմից քաղբանտարկյալ ճանաչվածների մասին նա ասաց. «Նրանք իսլամիստ դատապարտյալներ են, նրանց նմաններին մենք էլ ունենք»:

Երբ 2013 թ. հունվարին ԵԽԽՎ-ում Բունդեսթագի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ԳՍԴԿ, գերմ.՝ Sozialdemokratische Partei Deutschlands) պատգամավոր Քրիստոֆ Շթրեսերի՝ Ադրբեջանի քաղբանտարկյալների մասին զեկույցը տապալվեց (այսօրվա իմացությամբ՝ գլխավորապես այն խորհրդարանականների խարդավանքների և քվեների պատճառով, որոնք դրա համար նպաստավորում են ստացել Ադրբեջանից),

պարզվեց, որ Հաուզերը գոհ էր: Նա գարշելի փաստերով կշտամբեց Շթրեսերին, որի մուտքն իր տարածք Ադրբեջանը մերժել էր՝ ասելով, թե նա իր զեկույցը կազմել է «միայն երկու ակտիվիստների ցուցմունքների հիման վրա»: Անցյալ տարվա աշնանը՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ավարտից հետո, Հաուզերը տեսանյութով շնորհավորեց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին և «Ադրբեջանի ժողովրդին հանուն խաղաղության կատարված այդ կարևոր քայլի կապակցությամբ»: Այդ ժամանակ Բաքվի վարչակարգն այլևս չէր թաքցնում, որ ինքն էր սկսել պատերազմը՝ վերադարձնելու համար տարածքը, որը միջազգային իրավունքի համաձայն՝ պատկանում է Ադրբեջանին, և հաղթական ժեստեր ու սպառնալիքներ էր ուղղում հաղթված Հայաստանի հասցեին:

Այդ տեսանյութն անհետացել է հյուպատոսարանի կայքէջից և նրա ֆեյսբուքյան էջից ճիշտ այնպես, ինչպես՝ ԵԽ-ում Ադրբեջանի գնած քվեարկության հաջողության կապակցությամբ Հաուզերի գոհունակությունը: Կայքում այժմ կարելի է գտնել գրեթե բացառապես անվնաս՝ մշակույթի, զբոսաշրջության և տնտեսության վերաբերյալ տեղեկություններ: Նաև «Միության» Ադրբեջանի մյուս բարեկամներն են քողարկվում անակնկալ ուշադրությունից, որն Ակսել Ֆիշերի նկատմամբ դատախազության հետաքննության և դիմակի տհաճ գործի պատճառով իրենց է վրա հասել: Իրենց վարած գործունեության վերաբերյալ հարցերին նրանք չեն պատասխանում կամ պատասխանում են խուսափողականորեն:

Օրինակ՝ “Frankfurter Allgemeine Zeitung”-ին ուղարկված էլեկտրոնային նամակում Օլավ Գութինգն իր գործելակերպը հիմնավորում է ԵՄ-ի էներգամատակարարման դիվերսիֆիկացման հարցում Ադրբեջանի կարևորության վերաբերյալ կանցլերի հայտարարություններով և գերմանա-ադրբեջանական աշխույժ տնտեսական կապերով: Նա ասում է, որ ոչ մի կապ չունի TEAS լոբբիստական կազմակերպության հետ, թեև տարիներ շարունակ ադրբեջանական անգլալեզու լրատվամիջոցներում նրան բազմիցս հղել են՝ վկայակոչելով TEAS-ը: Եվ միայն մեկ տարի անց այն բանից հետո, երբ Գութինգը ցույց տվեց, որ տպավորված է Ադրբեջանի «ժողովրդավարության երկարատև պատմությունից», նա, ահա, գրում է. «Իմ իմացությամբ՝ Ադրբեջանում կան մարդու իրավունքների խախտումներ և մամուլի սահմանափակ ազատություն: Երկուսն էլ չեն կարող համատեղվել ժողովրդավարության հետ»:

*Սկզբնաղբյուր՝ **“Frankfurter Allgemeine Zeitung”** (https://zeitung.faz.net/faz/politik/2021-03-26/cb17bc1b473e3db4f9a7116fe7816415/?GEPC=s3)*